

Hentchak :
ORGANE DU PARTI
REV. ARMÉNIEN
HENTCHAKISTE.

ՀԵՉԱԿ

ADRESSE
M. BELLART,
85, Peckham Rye
LONDON, S.E.
Angleterre.

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀԵՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ



ՈՐՍՈՐԴ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԻԹՈՎ

Ուսումնական պատերազմի շնորհով քաղաքական միջոցառման անկման պատճառով թանձրացած լինելով Ուսումնական, թանձրացել է նաև թիւրքիայում:

Մինչդեռ ուսումնական կառավարութիւնը ամբողջովին զբաղւած է Հեռաւոր Արեւելքում, ուր աշխարհայական ծանապարհը նրա համար նոյնքան հարթ է, որքան մեղաւորի ծանապարհը զէպի արքայութիւն. մինչդեռ դրա շնորհով եւրոպական այլ և այլ տէրութիւնների յանդիման զգալի կերպով բարձ-

ւում են այն դժարութիւնները, որ ցարերի կառավարութեան կողմից միշտ հանդիպում էր նրանց քաղաքականութիւնը Մօսկւայում, — այստեղ այժմ միշտ սպասելի են անակախներ, որոնք կարող են ունենալ թերեւ զճաշկան նշանակութիւն նրա սահմաններում ամփոփւած այլ և այլ ազգերի ծակատազրի նրկատմաբ: Անակախներ կարող են տեղի ունենալ ամենից առաջ, բնականաբար, Մակեդոնիայի շուրջը, որի վերաբերութեամբ Աւստրիայի դիրքը բացառիկ նշանակութիւն ունենալով հանդերձ, չէ կարող չը մեղմել ու չը չափաւորել Անգլիայի քաղաքականութեամբ, որն անշուշտ քնաթափ չի մնալ ներկայ, Ուսումնականի հա-

մար խիստ անբարեպաստեհ, հանդամանքներում թիւրքական զորքերի նկատմամբ: Համարձակութիւն կը լինէր այժմից իսկ ենթադրութիւնների մէջ մտնել այն ընթացքի, ձևերի ու հետեանքների մասին, որ կարող են ունենալ աւատրիական, անգլիական և, չը մոռանանք աւելացնել, նաև զերմանական հակընդդէմ, յամենայն դէպս՝ անհաւասարակշիռ եռեակ քաղաքականութիւնը (Թիւրքիայում ապրող և միջազգային դատարանի առաջ ազգային դատ ունեցող ժողովըրդների ծակատաքրի վերաբերութեամբ: Աւսակայն, պարզ է, որ այդ պետութիւններից մէկի կամ միւսի միջամտութիւնը կարող է առաջ բերել մի բան.— Արևելեան, միշտ շուտափոյթ լուծում պահանջող և միշտ անլուծելի մնացած, հարցի, կամ աւելի ճիշտ՝ հարցերի նորոգ բացումը: Բայց այդպիսի մի հաւանական ենթադրութիւն, որ վաղը կարող է լինել իրականութիւն, չէ՞ դնում արդեօք ի միջի այլոց նաև թիւրքահայ ժողովրդի վրայ պարտականութիւն՝ շուտափոյթ ու ժրջան կերպով առաջ մղել ամեն նախապատրաստութիւնների իրանց յեղափոխական տարրերի ձեռքով: Աւայս վերջին պարագան, առանց որի ո՛չ մի աջողութիւն չէ կարելի սպասել Պորթի համար, չէ՞ պայմանաւորում արդեօք այն, որ հայ յեղափոխականը Թիւրքաց-Հայաստանում պէտք է ունենայ այժմ խիստ զգուշաւոր, խիստ աչալուրջ և անաղմուկ ընթացք և որոշապէս նախազեւած տակտիկա, որի նպատակը պիտի լինի որոշ հոսանքի, համատեղ գործառնութիւնների և մէկ և ընդհանուր ուղղութեան ամփոփմէջ ամփոփել յեղափոխական գործունէութիւնը Թիւրքիայում:

Այդպիսի պայմանների գործադրութիւնն անհրաժեշտ է, նաև հիմնական, հէնց այն պատճառով, որ յեղափոխական գործը Թիւրքաց-Հայաստանում ինքնապաշտպանութեան գործ չէ, մի գաղափար, որ դարձել է կարծես հայ միջակ յեղափոխականի համար մի տեսակ դաւանանք, որն իր մէջ է կրում նրա յեղափոխականութեան ամբողջ այբուբէնը: Ո՛չ. յեղափոխականը պէտք է իմանայ, որ Թիւրքաց-Հայաստանում յեղափոխական գործը յարձակողական մեթոդ է պահանջում, նա ապստամբա-

կան գործ է. նա չէ սպասում, որ թշնամին զայ հայ ժողովրդին կոտորելու, որպէս զի այդ դէպքում միայն ինքնապաշտպանութեան զիմէ. նա չէ ընդունում այն, որ փոքրիկ, ցիր ու ցան մարտական խմբակներ, պարզամտութեամբ իրանց երևակայելով զինուորական վաշտեր, դէս ու դէն «հրոսակային» դիւլէտ ահա ու զմով զբաղեն: Յարձակողական մեթոդը, ապստամբական գործը պահանջում է լուրջ կարգապահութեամբ և կանոնաւոր կերպով զինւած մի կազմակերպութիւն, որ ներկայանայ իբրև յեղափոխական տարրերի մի հաստատ զանգւած, կարող յարձակողական կռիւ մղելու, որպէս և ռազմական զիրքեր ստեղծելու՝ զիմադրելու համար թշնամու յարձակումներին:

Այդ գործը մեծ է և պահանջում է մեծ աշխատանք, դժւարին աշխատանք, տոկոն աշխատանք, այո՛. բայց այդպիսի աշխատանքի ծանրութիւնը միթէ կարող է առարկութեան տեղ ծառայել ընդդէմ գործունէութեան այն մեթոդի, որից կախած ենք համարում Պորթի յաղթանակը: Այրբ միանգամ այդ յաղթանակի պայմանըն է ներկայանում այդպիսի աշխատանք, պէտք է ջանալ գործադրել այն, գործադրել, միշտ համաձայն յեղափոխական բարձր էթիկայի, ամեն կանոնաւոր եղանակներով և գործնական ու նիւթական զոհողութիւններով, եռանդուն գործունէութեամբ և զրամով:

Այդպիսի պրակտիկական գործունէութեան գործադրութեան զերն ընկնում է Հնչակեան Աւսակցութեան Թիւրքաց-Հայաստանի կազմակերպութեան վրայ: Փորձառու իր անցեալից և կենսունակ ու գործունէայ ներկայումս, նա պէտք է ցոյց տայ վարչական մեծ ընդունակութիւն ու կազմակերպական հմտութիւն, նա պէտք է ամենմի ժամանակ գաղափարապէս գտնէ իւր քաղաքական մեծ դերի բարձրութեան վրայ և գործնականապէս հիմք ունենայ իրան ժողովրդային աշխատաւոր ընդհանրութիւնը, որպէս և թէօրիապէս առաջնորդող լինի այդ ընդհանրութեան պատմական ռամկավարական ձգտումներով:

Ո Ր Մ Ո Ր Դ

(ՏԻԳՐԱՆ ԻԶՄԻՐԵԱՆ)

Բաւական բարեկեցիկ ընտանիքի զաւակ Տիգրանը ծնեց Զմիւռնիայում: Նրա հայրը, որ բիւշ ու շատ գրեւ-կարգաւ գիտէր և գնահատում էր գրագիտութեան նշանակութիւնը, կամենալով իւր որդուն տալ ժամանակի պահանջած կրթութիւնը՝ ո՛չ մի միջոց չը խնայեց իր մտադրութիւնը իրագործելու համար: Եւ փոքրիկ Տիգրանի առաջ բացեցան Զմիւռնիայի և Երզնկայի ազգային ուսումնարանների դռները:

Աշակերտական շրջանում նա աւելի ևս երևան բերեց իր հակումը դէպի ընդհանուրի օգտին ծառայելու գործը, այնպէս որ նա — ասիացի ուրիշ երեսանների նման — չի կղզիացաւ ինքն իր մէջ, այլ ձգտեց հետզհետէ լայնացնել իր ընկերների շրջանակը, որի մէջ ինքն էլ առանձին տեղ բռնեց թէ՛ ուսումնարանական պարտականութիւնները կատարելու և թէ՛ մանկական խաղերն աւելի արագ և աւելի ուրախութեամբ շարունակելու ամբողջ ժամանակը:

Որպէս ուսումնարանի աշակերտ՝ նա երբեք չի կամեցաւ ուսուցչական նկատողութիւնների ենթարկել, ինչպէս և աշխատեց իր ընկերակիցներից շատերին էլ այդ մտքով միշտ յորդոր կարգաւ: Իսկ որպէս խաղի ընկեր՝ նա միշտ էլ իր քաղցր բնուորութեամբ խաղակիցների հրամանատարը հանդիսացաւ: Շնորհիւ իր ստացած հեղինակութեան՝ նա ընկերական կռիւների, վէճերի մասին դատաւճիռ արձակելու մշտական դիրքի մէջ մնաց: Մանուկ դատաւորը իր արդար վեճիւններով ամենքի սիրելին դարձաւ:

Վերելաւոր, որ Տիգրանի համար ամեն խաղերից լաւն էր և որ նա անչափ սիրում էր, նրա ուղղական ընդունակութիւնների զարգացողը եղաւ: Եւ որպէս կուռղ մանուկ՝ նա որոշ ժամանակից յետոյ զէնքեր ունենալու բռն փափագով լցեց, փայտեայ ու ոսկրեայ զէնքերը նրան բաւականութիւն տալուց շուտով դարձրեցան, այնպէս որ հետզհետէ զինագործութիւնը դարձաւ նրա իգէտը, մանաւանդ որ միջավայրն էլ այդպիսի պահանջ էր ներկայացնում:

Վերջապէս ուսումնարանական պարապմունքներն սկսեցին իրանց նշանակութիւնը կորցնել նրա աչքում և Տիգրանը գրիչի տեղ ամենամեծ հաճոյքով բռնեց մուրճն ու խարտոցը: Մի քանի տարիներից յետոյ, պատանի զինագործի համբաւը շատ շուտով տարածեցաւ շրջակաները: Նա հետզհետէ այնքան առաջագիմեց իր արհեստի մէջ, որ նրա շինած հրացանները և փամփուշտները խկականներից ոչնչով չէին տարբերւում:

Եւ ահա՛ հէնց այդ ժամանակներում գտնուե-

ցաւ մէկը, որ ամենից աւելի լաւ գնահատեց նրա զինագործական կարողութիւնը: Դերսիսի հերոս Բեռնի իր քաջերի մէջ պէտք ունէր տեսնելու մի հաւատարիմ զինագործի, քանի որ նրա հրոսակների զէնքերը երբեմն-երբեմն նորոգւելու հարկի մէջ էին գտնուում:

Վերելի տեսակցութիւնը Տիգրանի հետ և նրա հրաւերը — թողնել քաղաքը և բարձրանալ իր արծաթին թագաւորութիւնը — երջանկութիւն էր Տիգրանի համար:

Առողջ, ամրակազմ զինագործը, որ յեղափոխութեան կրակով ինքն իր մէջ այրւում էր, առանց ժամանակ կորցնելու հաւաքեց գործիքները և գնաց զէնքեր պատրաստելու, նորոգելու նրանց համար, որոնք այնքան պէտք ունէին իրան և որոնք աւելի էին արժանի իր ձեռքի աշխատանքի պատուներով մահ ստիպելու թշնամու շարքերի մէջ:

Վերելի ուրախութեան չափ չը կար: Նա Տիգրանի մէջ տեսաւ իր ոյժերի անխորատակնութեան մի մասը, և հէնց այդ պատճառով էլ ընտան զինագործը նրա առանձին ուշադրութեան և գգւանքին արժանացաւ:

Եւ միջգեռ Բեռնի խումբը մի կողմից սպառում էր ուղղմամբերը թշնամիների — Զէրի փաշաների դէմ մղած կռիւներում, միւս կողմից էլ Տիգրանը իր մուրճի ձայնը միախառնելով քաջերի յաղթական աղաղակների հետ՝ նորերն էր պատրաստում և նրանց տրամադրութեան տակ դնում: Եւ այսպէս շարունակ:

Տիգրանը Բեռնի աջ բաղուկը դարձաւ:

Սակաւախօս և համեստ զինագործը ո՛չ միայն իր աշխատանքի արդիւնքը նւիրեց Սեպուհ լիւան քաջերին, այլ և իր կեանքը չը զրոյցաւ թշնամու գնդակների առաջ զնել՝ կուռղ ընկերների շարքում կանգնելով: — Զինագործական և զինւորական պարտականութիւնները նա լի ու լի կատարեց Բեռնի մղած յայտնի կռիւների մէջ:

Տիգրանը շատ անգամներ գործնականապէս ապացուցեց, որ ինքը յիրաւի արժանի է Որսառի անան: Նրա գնդակը հազիւ էր վրիպում: Նշանառութեան մէջ չափազանց հմուտ լինելով՝ նա Բեռնի նոր զինւորների ուսուցիչը եղաւ հրացանաձգութեան մէջ:

Մի անգամ, երբ Բեռնի և Երիզայի գայմագամը յեղափոխականներ փնտռելու պատրաստով մտաւ Ուրա, սակայն ոչ ոքի չը գտնելով՝ գիւղի աւարն առաւ դուրս գնալու համար՝ Բեռնի խումբը վրայ հասաւ և գլխաւորի բերանով սպառնաց կոտորելու թէ գայմագամին և թէ նրա զինւորներին, եթէ նրանք աւարը չը ձգէին և հեռանային: Գայմագամը հնազանդեց, սակայն մինչև այդ՝ Որսառը մի որս ևս արեց — մի չափուշ գետին թաւալեց: Խումբը աւարը գիւղացիներին դարձնելուց յետոյ լեռը քաշեցաւ:

Ուսաւորիչ մանաստանի, նրա անտառի և Տրդատ

Քարի ոգին շատ անգամներ բանտը նստեց, ուր նրան սարսափելի տանջանքներ տւին, բայց վերջին անգամ Երզնկայի յայտնի դէպքից յետոյ, երբ բաղարի տըները խուզարկելիս կառավարութեան պաշտօնականները գտան Քեռիի խմբի զէնքերի մի մասի հետ նաև Տիգրանի գործիքները ու նրան էլ բանտը տարան, Որսորդին մեղում էր միայն փախչելով աղստուել ա. մենախիստ պատժից:

Սի երեկոյ նա մտաւ բանտապետի սենեակը և նրան այնտեղ չը գտնելով՝ հագաւ նրա վերարկուն, դրեց զլիարկը ու պահապան ղինւորի առաջից հանդարտ անցնելով՝ աներևոյթացաւ մթութեան մէջ:

1895 թվի կոտորածից յետոյ, երբ Քեռիի խումբըն էլ ցիր ու ցան եղաւ, Որսորդն անցաւ Կովկաս: Բաթումում գտաւ նա մի քիչ հանգստութիւն և տեղական ընկերների մէջ մտաւ ու նախկին հաւատքով յեղափոխական գործին ծառայեց իր բոլոր ոյժերով:

Վերջապէս «նաւահանգիստ» և «Ծխախոտ» մասնաճիւղերի կողմից ընտրւեցաւ պատգամաւոր Հնչ. Կուսակցութեան IV Պատգամ. Ընդհ. Ժողովին մասնակցելու համար: Այդ պարտականութեամբ էլ անցաւ Լոնդոն: Եւ երբ նա պատրաստուում էր, Ժողովից անմիջապէս յետոյ դարձեալ ուղղակի երկիր մտնել, հայ չարագործի ձեռքով նահատակւեցաւ բնաւորութեամբ աւեկնառաւեստ և անփառաւէր գործիչ՝ Թողնելով ամուսինը և մի փոքրիկ աղջիկ զաւակ:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆԱՄԱԿՆԵՐ ԹԻԻՐԲԻԱՅԻՅ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՐԿՐԵՆ

Հանրածանօթ Շէյխ ճէլալէտտինի որդի Սէյիտ Ալի Խիզանի գաւազամուծեան վերաբերող գաւառները, ինչպէս նաև Կարճկանն ու Կիցանը խապառ քրդացնել որոշած է: Հակասակ մեր կրկին և կրկին բողոքներուն ազդիս պատրիարքարանի և տեղական ու նահանգային իշխանութեանց մօտ՝ սպանութիւններ, յափշտակութիւններ, կեղեքումներ, առեւանգութիւններ, բռնաբարութիւններ և այլն կը շարունակուին յայտնի և համարձակ ամենայն անգթութեամբ և լրբութեամբ: Շէյխը սուրբի պէս կը պաշտօնի քիւրտերէն, որոնք իր հասցէին աղօթքներ և մաղթանքներ կ'ուղղեն իրենց տուններէն: Ամէն գիւղ այցելած ատեն ուղած հայ կին կամ աղջիկ իր քովը կը տանի ու կը պահէ օրերով և շաբաթներով, և շատերը կը թրքացնէ: Աչքի զարնող երիտասարդներ կամ չափահասներ ամէն տարի սպանութեամբ կը տասանորդ-

դէ: Մարդ, կին կաշխատեցնէ հնձելու, փայտահատութեան, շինութեան, կալի, փոխադրութեան և այլն գործերու մէջ: Իրենց հացովն ու ջրով, շատ անգամ Եօթ ութ ժամու ճամբայ ձեան վրայ բեռնաւորած քաղցնելով, գուլպաներ և տրեխներ հանելէ վերջ, այդպէս բոկոտն ձեան կոյտեր կոխել կուտայ՝ որպէս թէ ցորենի խուրձեր ըլլային կ'աշխատեղերու մէջ, և ինքն ալ իտես այդ թշուառներու ցրտահար սարսուռին կը զուարճանայ իր մարդոց հետ: Ամէն կրօնական սրբութիւններ և եկեղեցիներ կը սրբապղծէ, և տակաւին շէն մնացած երեք վանքերը՝ Եօթ Խորան Ս. Աստուածածին, Ս. Գամաղիէլ և Աւագ Ս. Խաչ, կաշխատի իւրացընել՝ հալածելով վանահայրերը և շրջակայ հայ բնակիչները, այնպէս որ Ս. Խաչի վանահայր և տեղ. ոյն առաջնորդական փոխանորդ Պետրոս վարդ. ճարահատեալ Խիզանի ջանքեան Որբանոցը պիտի ցրէ ու փախչի. Խիզանի գալմագամութեան 60—70 հայ գիւղերը բանիւ և գրով կը յայտնեն, թէ կամ գաղթել (ինչ որ դժուար է շատերու համար) և կամ թրքանալ միայն կը մնայ իրենց: Վերջին շաբաթեան մէջ 200-ի չափ անձինք մեղ մօտ գալով՝ կուղէին գաղթելու միջոցներ պատրաստել իրենց ամբողջ հայրենակիցներուն համար, բայց 7—8 օր քովս պահելով՝ յաջողեցայ համոզելով և յուսադրելով ետ դարձնել. սակայն շաբաթ մը առաջ ստացայ նորէն յուսահատական սրբտաճմիկ գրութիւններ, որոնց եթէ արդեամբ չը պատասխանուի քիչ ատենէն, վախճամ թէ մեծ մասամբ Սէյիդ Ալիի փարախը դիմեն, զի այդ ամենաթշուառ ստրուկներու համար ալ ուրիշ միջոց չկայ ապրելու և ապրեցնելու իրենց ընտանիքներ:

Բաստ անունով գիւղ մը 35—40 տնւոր՝ Եօթ տարի առաջ թրքացած Խիզանի մէջ, և Աւանց գիւղ, հինգ տնւոր, Կարճկանի մէջ (Աւանց առաջնորդարանի թեմ), մէկ այցելութեանս միջոցին յաջողեցայ քրիստոսի փարախը վերադարձնել, բայց այսօր ահագին վտանգ կսպառնայ այդ խեղճերու կեանքին, պատուին և ըստացուածքին: Հապիւ թէ հայ գիւղացին մէկ-երկու ոչխար, եղ կամ կով կուեննայ՝ և ահա կը յափշտակուին ատոնք Շէյխի 200-է աւելի զինեալ խօլաճներէն կամ իր արբանեակ աւանդական պէյերու կողմանէ, պէյեր՝ որք շատ են և իրենց Շէյխի անլուր խրժղժութիւններ ու անառակութիւնները ճշգրութեամբ կը կրկնեն իրենց իրաւասութեան շրջանակներու մէջ: Շէյխն ու պէյերը իրենց ոչխարները, ձիերը և ուրիշ տուարներ պահ կուտան գիւղացիներուն ամէն ձմեռ, և եթէ հատ մը սատկի կամ նիհար ըլլայ՝ կրկին ու կըրկին արժեքով անասնոցէն կամ տուգանք կանեն: Արգաւանդ կալուածները կը գրաւեն ի հաշիւ թէ քրէյի և բողոքողները կեանքէ կը զրկուին, ինչպէս Շէյխի հրամանաւ խեղդուեցաւ այրի հայ կին մը, որուն արտեր և ջրաղաց մը յափշտակած էին: Խօլաճները ի հաշիւ հայ գիւղացիներուն կապրին և ընտանեկան սրբութիւն մը չկայ իրենց համար անբռնա-

բարեւի. որ տուն որ մտնեն, հակառակ պարագային՝ սպանութիւն կամ առեւանգութիւն: Աւելորդ է նկարագրել հայ գիւղացւոց ծայր աստիճան աղքատութիւնը և բարոյական անօրինակ անկուժը: Հապա ինչ կընէ կառավարութիւնը, որ անունով միայն գոյութիւն ունի այդ կողմեր: Յանուն տրոց խեղճ ոչխարի բուրդը մինչև միսերը խողելէ և ամեն տեսակ բռնութիւններէ զատ՝ ոչ ալ ինչ, եթէ ոչ ամեն տեսակ բարոյական բռնաբարութիւններ կոյսի և ամուսնացեալի վրայ հարկահաւար զինուորի և ոստիկաններու կողմանէ:

Այս բոլորը տեղեկագրելով Ձերդ

Մնամ Ա. Ա.

ՏՐԱՊԻՉՕՆ, 17 Մարտ, 1904

Այս օրերս քաղաքիս թիւրք ազգաբնակչութիւնը տարօրինակ իրարանցման մը մէջ է և լռելայն բաներ մը կը դառնան: Օրը նոր՝ դէպքը նոր, կարծես թէ 1895 թականի սև օրերը կրկին ետ դարձած են: Թիւրք մը, որ հայ մը տեսնայ՝ ահաւնները կը կրճատացնէ և կուզէ, ինչպէս կըսեն, հում-հում միսը ուտել:

Ասկէ բանի մը օր առաջ հայ և թիւրք հրկուսիկաներ իրարու հետ կուի կը բռնին ու դանակ գանակի կուգան: Այդ կուռն մէջ թիւրքը կսպանի: Ասոր համար բոլոր թիւրքերը խիստ զայրացած են հայերու դէմ և ամեն գիշեր դուրսը որ հայ մը տեսնան՝ անպատճառ կամ ետեէն ինչալով մի քանի տփոց պիտի տան և կամ հայր-մայր, հաւատք-օրէնք հայհոյելով միայն ազատ թողուն: Այս անախորժութիւններէն ազատ մնալու համար հայերը իրիկան ժամը 7-էն վերջը ստիպւած են տունէն դուրս չելալ:

Անցեալները գիշեր մ'ալ տեղուս Ամերիկեան հիւպատոսի դափազին վրայ կը յարձակին երկու թիւրքեր ու կոկորդէն սեղմելով խեղդել կուզեն: Խեղճ զավազը հազար ու իւր իւր մէկ փարա ընելով, հազիւ կը համուկէ զերենք, որ ինքն ալ թիւրք է և ոչ թէ հայ: Ու այսպէս կերպ մը խեղդելէն ազատած՝ կապուտցած վրով և ճանկուտած երեսներով հիւպատոսարան հասնելով՝ առաջին գործը կըլայ եղիւթութիւնը հիւպատոսին իմացնել: Հիւպատոսը խիստ բարկացած՝ իր թարգմանին միջոցաւ նոյն գիշերը և եթ վալի փաշայէն յանցաւորները պատժել կը պահանջէ: Հետեւեալ օրը երկու յանցաւորները ձերբակալուելով բանտ կը նետուին:

Երկու գիշեր առաջ ալ տեղուս յոյն բժիշկներէն մէկը, երբ հիւանդի մը մօտէն տուն կը վերադառնար, երկու երեք թիւրքեր վրան կը յարձակուին ու մէկ-երկու ապտակ տալէ վերջ՝ վրան գտնւած

ոսկի ժամացոյցը և 2 արծաթ մէծիտիէն առնելով թող կուտան (թող Ալահին փառք տայ որ այսքան աժան խախտեցաւ):

Հայ գիւղացիները խիստ նեղութիւն կը կրեն մասնաւորապէս աուրբերու երեսէն: Մօխթարն ու զապթիէները շարունակ դռներու առաջ կայնած են. վայ անոր, որ քիչ մը երկայն կընէ ու տալիքը կուշացնէ. այդպիսին հրացանի կոթով սեռայ երթալը ալ աչքը առնելու է:

Թէ՛ քաղաքին և թէ գիւղերուն մէջ թիւրքերը ինչ որ նոր ջրգի խօսքեր կընեն և կը վախցնեն հայերը, թէ այս անգամին ո՛չ տղայ, ո՛չ աղջիկ և ո՛չ ալ կին պիտի թողուն կամ խնայեն, բոլորն ալ սրէ պիտի անցնեն: Ասկէ զատ թիւրք գիւղացիները հայ գիւղացիներու երեսն ի վեր կըսեն, թէ ինչ լաւ կը ցանէք, կերեայ թէ մեզի համար կը ցանէք:

Այս բոլորէն յետոյ սա ալ պիտի ըսեմ, թէ Հայ ժողովուրդն այլ ևս հոգիէն վաղ անցած՝ զէնք, զէնք կը փնտռէ, համուզած ըլլալով որ օտար պետութիւններու կամ անոնց հիւպատոսներուն վրայ այլ ևս յոյս դնելը յիմարութիւն պիտի ըլլայ:

ՊՈՆՏԱՅԻ

Փորը Հայքի մեր ներկայացուցիչը հաղորդում է հետեւեալ խիստ ցաւալի լուրը:—

»Խարբերդի մեր բանտարկեալներէն՝ Գարապուլաղցի Գալուստ Անդրէասեան և Շապին-Գարահիսարցի Յակոբ Թեփեքչեան կախաղանի վճռու կերան:

Արաբկիրցի Յարութիւն Սեմերճեան (ոտքը կոտրած) 15 տարեայ, իսկ 13 բանտարկեալներ ալ 5-10 տարի բանտարկութեան դատապարտեցան:

ՆԱՄԱԿՆԵՐ ԿՈՎԱԿԱՍԻՑ

ԹԻՖԼԻՍ, 18 Փետր. 1904

Ողջոյն մեր վրացի եղբայրներին... Վերջապէս լետարգիական քնից արթնացան մեր սիրելի եղբայրակիցները... Վէլիչկօնների, ճաւճաւաձէների և այլ չարամիտ զեռունների սերմանած որոմն ու տատասկը ժամանակից առաջ չորացան և անկարող եղան արմատներ ձգել: Ներքին, ազգայնական մոլութիւններն ու կռիւները դադարեցին ու վրացի մասսան դուրս եկաւ ափաշկարա ցոյց տալու, որ վաղուց անցել են այն ժամանակները, երբ նա շոյում էր իրան օրօր «սողնելին» և լսում իրան նախապաշարողներին:

Այսօր նա հասկացել է իւր չարն ու բարին և հասարակական-քաղաքացիական պարտականութիւնը ընդգէմ ցարիլմի, ու զէնքը ձեռին ոտքի է կանգնել, իւր ցեղական դիւրագրգռութեամբ պաշտպանելու ոտ, նախօրս եղած իրաւունքները: Քոթայիսում սկսել է

մի հակակառավարչական ցոյց՝ ճիշտ այն ժամանակ, երբ Ռուս կառավարութեան ծաղրածու կամակատարները և ոստիկանութիւնը, ինչպէս Կովկասի բոլոր քաղաքներում, նոյնպէս և այստեղ, ժողովրդին բռնի կերպով ստիպում էին փողոցէ փողոց պատել և Ռուս-ճապոնական պատերազմի մէջ տարած ? յաղթութիւնների առթիւ ուսանելու գորգոռալ, «հայրենասիրաբար» իրենց քսակի բերանը բաց անել: Բայց նոյն ժամին քութակի սուր և վրացիները յարձակում են ոստիկանների վրայ, խլում նրանց ձեռքից ցորիզմի դրօշակը և նրա փոխարէն բարձրացնում յեղափոխական կարմիր դրօշակը: Ցոյցին մասնակցում են անխտիր թէ հայերը և թէ գլխաւորապէս վրացիները:

Պարզ նկատում է այժմ Կովկասի բոլոր քաղաքներում հայերի և վրացիների մերձեցումն—իրեւ պահանջ միատեսակ անտանելի դրութեան: Ողջոյն մեր բախտակից վրացի եղբայրներին: Նոքա մեր կողմից բաց բազուկներ կը գտնեն ընդհանուր թշնամու դէմ մղւած կռւի մէջ:

Մենք ձայնակից ենք լինում նրանց —

Կեցցէ՛ Յեղափոխութիւնը

Կեցցէ՛ տանջողների համերաշխութիւնը:

Լ:

ԱՆԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ 23 Փետր. 1904

Ռուս-ճապոնական պատերազմը եկաւ միանգամայն ապացուցանելու, որ Ռուսաց պետութիւնը ըստ ինքեան այնքան էլ մեծ հսկայ չէ ներկայանում, որքան այդ երկում էր արտաբոստ: Չունենալով իր մէջ ներքին բարոյական ոյժ, նա այսօր հանդիսանում է աշխարհի առաջ մի հսկայ դարեւոր ծառ, որի մէջը փրտած և դատարկ լինելով՝ խոնարհում է փոթորկի առաջ և կամ տապալում կացնի մէկ զօրեղ հարածով: Այսօր բռնապետական ընդհանուր աշխարհում այս պետութիւնը միանգամայն խոյտառակւած է նորանով, որ ապագանակութիւնը չէ համակրում սկսած պատերազմը, չէ աջակցում նրան, միանգամայն անտարբեր է վերաբերւում՝ համաշխարհային Ռուսաստանի ռոնձգութիւնները աւաղակային, բարբարոսական վերաբերմունք դէպի խաղաղ և հեղաբարոյ արեւելքը: Ապացոյցները հազարներով կարելի է թելել: Սակայն բաւական է միայն տեսլ, որ ամեն տեղ ոստիկանութիւնը բռնի և արհեստական կերպով ցոյցեր է պատրաստում՝ մասսայական համակրանքներ ցոյց տալու սկսած պատերազմին, բայց բարեբախտութիւնը նորանում է, որ բռնութեամբ հաւաքած ամբոխը փոխանակ համակրականի՝ հակակրական ցոյցեր է անում, որից և առաջանում է ընդհարում, կռիւ, արեւհեղութիւն, ինչպէս այդ տեղի ունեցաւ թէ՛ ներքին նահանգներում և թէ՛ Կովկասի մէջ, այն է՝ քութակի սուր, Բաթում

մում, Բաթում և այլն և այլն:

Կովկասում յեղափոխութեան գործը խոր գիտակցութեամբ, արագ քայլերով առաջ է գնում: Ազգերի և ցեղերի միահամուռ գործակցութեան գաղափարը շատ բնական և ապահով հողի վրայ է գտնւում, շնորհիւ նոցա ճակատագրի և բախտի միօրինակութեան ու միանման լինելուն: Այժմ վրաստանի զանազան անկիւններում խլրտումներ են տեղի ունենում բռնակալ պետութեան ընդդէմ դէմ կուելու համար: Այդ հանգամանքին շատ նպաստեցին հայկական շարժումները, որոնք միանգամայն ցոյց տւին մեր հարեան ազգերին, որ պէտք է կուել յանուն մարդկային նւիրական իրաւունքների, ընդհանուր աղատութեան սուրբ գործի:

Պաշտով զուտ հայկական իրականութեան՝ միութարական ոչինչ չունինք հաղորդելու, բաւական է միայն յիշել, որ արքայազն հոգեւորականների թիւը — թէ բարձրաստիճան և թէ բահանների — հարիւրից անցնում է, իսկ ոչ-կրօնականներին՝ մի քանի հարիւրի է հասնում: Բանտերը, շղթաներն ու կապանքները շատ սովորական երեւոյթներ են դարձել մեզ համար: Մերձ ի մահ տանջելն ու չարչարելը անմեղ բանտարկւածներին՝ վայրենի կառավարութեան անզուսպ կրքերին գոհացում տալ չէ կարողանում: Աւելի խոշոր հալածանքներ սպասում են օրէց օր:

Աւելի բան անմխիթարական մի երեւոյթ էր այն, որ հայերիս կողմից տեղ տեղ համակրական ցոյցեր կազմակերպւեցան պատերազմի առթիւ՝ կառավարութեան հաճոյանալու համար: Կարծում մի կարգ «յեղափոխականներ» անամօթաբար գնացին լիզելու բռնակալ կառավարութեան ներկայացուցչի — նահանգապետի ոտքերը՝ մի շատ բազմամարդ մասսայական ցոյցով: Ցոյցը փառաւոր էր, բայց խոյտառակութիւնը՝ աւելի փառաւոր: Ուղերձը, որ կարգում է հանդիսաւոր կերպով մի երդեալ «նացիօնալիստ» հայ յեղափոխական, անստորագիր է լինում, ուստի խորամանկ նահանգապետը առաջարկում է, որ ստորագրած իրան տան... Այստեղ արդարանում է այն իմաստութիւնը թէ՛ «փորեցին առաջի իմ խորխորատ և ինքեանք անկան ի նոյն»: Սա մի կատարեալ ծուղակ էր, ուր ընկան մեր յաջաբարեւոյ յեղափոխականները: Եւ ոչ մի ելք չկար և մերժել նահանգապետին՝ անկարելի էր, ուստի 4-5 հարիւրի չափ ստորագրութիւններով հետեւեալ օրը ուղերձը յաճնում է ըստ պատկանելոյն, այսինքն մեր ընդհանուր թշնամուն:

ՅԱՍՈՒՄ

Բաթումից մեզ գրում են.—

«Մարտի 3-ին Ախալքալքից տեղս բերին մի շարք հայ բանասերներ և մի քանի օրից յետոյ շղթայակապ արքայազնին Ռուսաստանի խորքերը: Սրանք բոլորն էլ եկեղեցական կալաւածների առթիւ Ախալ-

քաղաքում եղած ցոյցի ժամանակ ձերբակալւած և ափսոսանք արդէն տեղական բանտումը մնալուց յետոյ՝ համաձայն դատավճռի արքայը ևս ուղարկուեալ:

Ձերբակալւածները բոլորն էլ քաղաքի ինտելիգէնտ դասից են, որոնց մէջ գտնուում են նաև պ. պ. Վարդան, Հաս-Պարոնեան, Գրիգոր Պապոյեան և ուսուցիչ Տիգրան Տոնականեան՝ բոլորն էլ ամուսնացած և զաւակների տէր:

Daily Telegraph-ի մէջ կը կարդանք հետևեալ ցառալի լուրը.—

ՅՈՒՋՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Կ. ՊՕԼԻՍ, Մարտ 9

Մի քանի օր առաջ տեղեկագրւած էր, որ ծանր դէպք մը պատահած է Մշոյ Հովանի գիւղի մէջ: Ճիշդ այժմ ստացւած մանրամասնութիւններէն կերևայ, որ Յունան գիւղն է եղբոր փետրւար 5-ին, ուրբաթ օրը, 15 ոստիկաններու ջոկատ մը, որ հարկահաւաքութեան պաշտօնով Մշոյ դաշտի գիւղերն էին, կէս օրին իջան Յունան գիւղը: Լրտեսի մը միջոցով անոնց իմաց տրւած է, որ գիւղի այսինչ տունը 3 կասկածելի օտարականներու մտնելը տեսնւած է:

Ոստիկանները՝ առանց որ և է հարցութեան սկսեցին յիշեալ տան վրայ կրակել: Կրակին պատասխանեցաւ: Գրացի տներու հայերն ալ սկսեցին ոստիկաններու ետեւէն կրակել, որով վերջիններս շտապեցին ամենամօտ պատսպարանի մը տակ պահուել և յաջողեցան գիւղը շրջապատող գետակին միւս ափը անցնիլ: Միևնոյն ժամանակ սուրհանգակ մը կը զըկէր մօտակայ Նոր Շէն գիւղը, ուր պահապան զօրք կը գտնէր: Հռտով խռովութեան վայրը զինուորներ հասան ոստիկաններու օգնութեան: Զինուորները գիւղացիներէն գնդակներու տարափով և իրենցմէ երկուքը վերաւորելով՝ չհամարձակեցան աւելի առաջ խաղալ, այլ սպասեցին Մուշէն օգնութեան հասնելուն:

Արդէն միմնաբար մօտ ըլլալով՝ օտարականները —այս աղէտի հեղինակները— որոնք կը կարծէին թէ 6 հոգի էին, ոստիկաններու ձիերը խելով լեռները փախան: Յունանի ժողովուրդը, քաջ գիտնալով թէ ինչ պիտի պատահէ իրենց, երբ թիւրքերը յարձակուին վերսկսան, հակառակ ցուրտի և ձիւնի սաստկութեան՝ նոյնպէս սկսեցին լեռները փախչիլ:

Խռովութեան լուրը շուտով հասաւ Մուշ և մեծ իրարանցում պատճառեց: Հայերն անմիջապէս խառնութիւնները փակելով՝ իրենց տունները քաշեցան: Քիւր, տերը և թիւրքերը, որոնք երկար ատենէ ի վեր կըսպասէին այսպիսի խռովութեան մը, զէնքերնին վերցնելով խմբովին արշաւանք սկսեցին դէպի գիւղը՝ ամբողջ ճա-

նապարհին վազելով: Յունանի մէջ այլ ևս պաշտպանութեան փորձ չեղաւ: Խուժանը՝ առանց որ և է արգելքի և խոչընդոտի՝ ըրաւ ինչ որ կամեցաւ: Յունները տներումի ենթարկեցան ու քանդեցան, երկմարդիկ սպաննեցան, կանայք բռնաբարեցան և ամեն ինչ, որ արժէքաւոր էր և կարելի էր տանել, յափշտակեցան: Ապտուլահ անուն Արաբ մը իր գանձութեամբ մասնաւորապէս նշանաւոր դարձաւ: Հատ մը երեսաններ ցուրտէն մեռան:

Այս խռովութեան պատճառաւ մեծ երկիւղ կը տիրէ Մշոյ Հայերու մէջ, որոնք քիւրտերու և թիւրքերու կողմէ ահ ու սարսափի կենթարկին: Կառավարութիւնը անոնց ապահովութիւնը երաշխաւորելու անկարող ըլլալուն՝ ժողովուրդի առաջնորդները՝ պաշտպանութեան համար դիմած են Սուլթանին:

Reuter

ԿՕՆՖԵՐԱՆՍ

Ի ՆՊԱՍՏ ՄԱԿԵԴՕՆԵՍԻՆԵՐԻ

Բալթան-Վոֆտէի նախաձեռնութեամբ Մարտի 29-ին Caxton Hall-ի մէջ ի նպաստ Մակեդոնացիների տեղի ունեցաւ ազգային մի կօնֆերանս, ուր ներկայ էին Միացեալ Թագաւորութեան ամեն կողմերից եկած յատուկ պատգամաւորներ, ինչպէս նաև բազմաթիւ լօրդեր ու պարլամենտի անդամներ: Ժողովին նախագահում էր Rochester-ի եպիսկոպոսը: Քէնտրպէրիի արքեպիսկոպոսն էլ մի համակրական նախագահ էր ուղարկել, որի մէջ ասում է ի միջի այլոց հետեւեալ նշանակելի խօսքերը.— «Մակեդոնիայի մէջ մարդկային սովորական օրէնքները ոտնակոխ են արւած ապստամբութիւնը զսպելու պատրւակով, մի ապստամբութիւն, որ անխուսափելի էր դարձել շրջնորհիւ ստոր և յոռի վարչութեան»:

Կային 12 ատենախօսներ, որոնց մէջ էին նաև յայտնի հայասէր փիէր-Քլար, Վիկտոր Բերարդ և այլն, որոնք նկարագրեցին Սասունի տաքնապալից կացութիւնը և շեշտեցին նորանոր կոտորածների անխուսափելիութիւնը, եթէ Եւրոպան առաջն առնել չը փութայ: Նրանք ապացուցեցին, որ Հայկական ու Մակեդոնական ինքիւններն անբաժան են միմեանցից:

Խօսեցին նոյնպէս Իտալիայի պատգամաւոր Աշնօլետտի, Մակեդոնիայի պատգամաւոր տիկին Կարափէլով և Գեր. Դր. Ճիբսըն, ճէյմս Բրայս և լօրդ Լիտտլն: Ապա քննարկեցան հետեւեալ որոշումները.—

1. «Միացեալ Թագաւորութեան ամեն կողմերից, ինչպէս նաև Ֆրանսիայից և Իտալիայից եկած պատգամաւորներից բաղկացած այս կօնֆերանսը յայտա-

րարո մ է, որ Մակեդոնիայի ու Հայաստանի մէջ թըրքական յուր վարչութեան շարունակութիւնը քաղաքակիրթ Եւրոպայի համար անպատուութիւն է և արձանագրում է իւր դատապարտութիւնը այդ նահանգներին մէջ թիւրքերի կողմից գործադրուած գաղանային անգթութիւնների մասին:

2. Պէկատեյով, որ Ռուսիան և Աւստրո-Ունգարիան անցած 14 ամիսների մէջ չը կարողացան Մակեդոնական ժողովրդի կ'սցութեան մէջ բարեփոխում առաջացնել և կամ ապստամբութեան վերսկսելու վտանգը հեռացնել, այս կոնֆերանսը յայտարարում է, որ Մակեդոնական խնդրի միակ գոհացուցիչ լուծումն է Սուլթանից անկախ և միայն Եւրոպական մեծ պետութիւնների առաջ պատասխանատու մի կառավարչի նշանակելը:

Այս կոնֆերանսն էլ, անցած տարւայ St. James Hall-ի մեծ միտինգի նման, ցոյց տւեց, որ Անգլիական ազգը և պետական եկեղեցին՝ առանց կուսակցական և յարանձանական խտրութեան՝ ամբողջովին զրգուած են Եւրոպայի անտարբերութեան դէմ:

Հնչական կուսակցութեան կենտրոնը մի հեռագրով շնորհաւորեց և յաջողութիւն ցանկացաւ տանջւող Մակեդոնացի եղբայրներին՝ ի նպաստ սարքւած այս կոնֆերանսին:

ՌՈՒՍ-ԵԱՊՕՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

1. ԿԱՊԻՏԱԼԻԶՄ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄ

(Շարունակութիւն *)

Անգլիայի քաղաքականութիւնն Արեւելեան Ասիայում 60-ական թւականներին, Չինաստանի հետ իր ունեցած պատերազմից ի վեր, պահպանողական էր: Բազմաթիւ կոլոնիաները, երկարամեայ առևտրական յարաբերութիւնները, որոնք ձեռք էին բերւել զենքի ձեռնարկով իրաւունքի դէմ, որպէս և, շնորհով յաղթական պատերազմի, բարձրացած վարկը՝ ապահովեցին Անգլիայի առևտուրը Չինաստանի հետ: Նրա համար եղաւ մի մեծ շահ այն, որ չինական փակ դրութեան մնացորդները մեան հաստատ և ապագայում, մնացորդներ, ինչից չինական առևտրի մրցողներն էին փնասուում գլխաւորապէս, որոնք շատ յետ էին մնացել կոլոնիական-քաղաքականութեան և ծովային ոյ-

ժերի զարգացման մէջ: Չինաստանի դատաւարութիւնը՝ դարձաւ Անգլիայի նշանաբանը: Եապոնական պատերազմի վրայ, Չինաստանի հետ, Անգլիան նայում էր մի տեսակ խառն զգացումով: Քանի խնդիրը կայանում էր նրանում, որ ձեռք բերւեն առևտրական առանձնաշնորհումներ, այդ պատերազմը միայն ձեռնտու էր Անգլիային. բայց նա տեսաւ իրա համար մի վտանգաւոր կոնկռէրեցիա այն բանում, որ Եապոնական ձեռնարկում էր իբրեւ արդիւնաբերական պետութիւն: Ինչպէս միշտ, շնենգաւոր Անգլիան՝ անցաւ հզօրագոյնի կողմը և ամենախայտառակ կերպով դաւաճանեց Չինաստանին: Դրանից քիչ վերջ, երբ ռուս-գերմանական համախմբումն Արեւելեան Ասիայում պատկառաւ ներշնչեց դէպի իրան, Անգլիան դաւաճանեց նաև Եապոնիային: Այն ժամանակ Ռուսաստանն ու Գերմանիան ուղղեցին իրանց քայլերը դէպի չինական ասիերը: Չինաստանի անբաժանութեան գաղափարը խախտւած էր, և ահա Անգլիան էլ շտապեց կցորդել դրան: Շուտով, սակայն, պարզ եղաւ նրա համար, որ վտանգ է սպառնում ոչ միայն Չինաստանին, այլ և անգլիական առևտրին ու քաղաքական ազդեցութեան Չինաստանում: Այդ ժամանակից նա սերտ կերպով յաղթեցաւ Եապոնիային և ձգտում է գործածել նրան գլխաւորապէս իբրեւ պատերազմական գործիք Ռուսաստանի դէմ:

Ռուսաստանի քաղաքականութիւնն Արեւելեան Ասիայում ներկայացնում է բացառապէս յափշտակութիւնների սխառէմ: Ռուսական արդիւնաբերութիւնը շատ չնչին է, որպէս զի նա կարողանար լոկ առևտրական յարաբերութիւններով ապահովացնել իրա համար կոլոնիաներ: Առևտրական ինտերէսները, որոնք Եւրոպայի կոլոնիական քաղաքականութեան մէջ խաղում են գլխաւոր դերը, ցարի կառավարութեան բաղաքականութեան մէջ անցնում են յետին շարքը: Նրա նպատակն է՝ տարածել ռուսական կայսրութեան զօրութիւնը, ամբողջ աշխարհը դարձնել սեփականութիւն Ռոմանովների տան: Յնորական տօմաւտիզմ! Ամբողջ երկրագունդն իր բոլոր երկիրներով ու ժողովրդներով բերել գնել ցարի գահի ոտքի տակ: Համաշխարհային պատմութեան, արդիւնաբերութեան, պատերազմի խաղըն ու ընթացքը, ազգային կռիւը, կլասսային կռիւը, ժողովրդների նիւթական և հոգեկան կեանքը, բոլորն ուղղել դէպի մի նպատակ՝ Ռոմանովների տոհմի ամենակարող փառքը! Դա, ի հարկէ, յիմարութիւն է, բայց մի յիմարութիւն, որ կաղմւել է պատմական կերպով և այդ պատճառով էլ ստեղծում է այնպիսի աքսորներ, որոնք մարդկային պատմութեան մէջ դառնում են յիսլահատ ֆակտորներ: Ըստ ինքեան, սակայն, ցարիզմի իդէալն իր զուտ ձեւի տակ այլ ևս գոյութիւն չունի. այդ իդէալը կտոր-կտոր է արւած, պատառ-պատառ եղած, մասնիկների բաժանւած և նրա աեղը դրւած են առերևոյթս ուրիշ ինտերէսներ, Գլխաւորական ձգտումներ, անգլիական-

կան ներառումներ, անցեալի մնացորդներ, ապագայի մասին գաղափարներ՝ բոլորը խառնած են միմեանց հետ, և գաղափարների, արարքների ու գեպքերի այդ յորձանքում է վերջոյ կորցնում են իրանց գլուխը նաև նրանք, որոնք իրանց համարում են այդ պրօցէսի ղեկավարներ:

Ռուսաստանի քաղաքականութեան մէջ Արեւելեան Ասիայում պէտք է որոշել երկու կարգ՝ իրար փոխադարձաբար պայմանաւորող ինտերէսներ:—ռուսական կայսրութեան տիրապետութեան տարածումն և փոխառնափոխանակութեան շրջանները համար պետական գանձարանը: Ռուսաստանի ֆինանսական աղքատութիւնն այնքան անասման է, որքան անասման է նրա դիպլոմատիայի ձգտումներն օտար երկրներ յափշտակելու մէջ: Ցարի կառավարութիւնն օտարի ոսկին նոր հողեր ձեռք բերելու համար է գործածում և ձեռք է բերում նոր հողեր, որպէսզի յորից ձեռք բերէ իրա համար ոսկի: Երբ պայթեց չինա-հոպոնակի պատերազմը, ցարի դիպլոմատիան անմիջապէս աչք տնկեց, որ մի բան ձեռք ձգէ իրա համար: Բայց Եապոնիայի աջողութիւններն ամենից առաջ ռուսական դիպլոմատիային ներշնչեցին մի որոշում — թուլացնել այդ երկիրը: Դա հէնց նոյն քաղաքականութիւնն է, որ ունի Ռուսաստանը նաև հարօգական արեւելքում: Անհիշելի II-ի միջամտութեան շնորհով — այդ կայսեր, որը հէնց այդ ժամանակները փորձած ու աւարտած լինելով իր ամբողջ հանձարն այլ և այլ գործերում՝ դարձել էր ծաղրելի և պապական մէկ իղձով, այն է՝ փորձել իր բախտը կոչօնական քաղաքականութեան մէջ, — ռուսական դիպլոմատիային աջողեց հանձարեղ մէկ օրին. միջազգային նաւատորմի մի ցոյցով վտնեցնել Եապոնիային և ստիպել նրան ձգել ու հեռանալ ցամաքի վրայ իր գրասած գիրքից: Դուրս հըրելով մրցակցին, Ռուսաստանը պարտաւեցաւ բռնել նրա տեղը: Նա միայն մի պատրաստ էր սպասում: Եւ հէնց կարծես դիտմամբ, յանկարծ տեղի ունեցաւ գերմանական միսիսներների սպանութիւնը Չինաստանում: Նեղաւոր ուրախութեամբ, վատ բողբոջած ձեռքան զայրոյթով, Գերմանիան պոկեց իրա համար յիսո-Չոու: Գերմանիայի հետ միասին առաջ գնաց և Ռուսաստանը. նա տիրացաւ Պօրտ-Արտիւրին և իր ձեռքը տարածեց մինչև Մանջուրիա: Այն, ինչ արգելած էր Եապոնիային, այժմ՝ ամենախիւր անամօթութեամբ գործադրւում էր ուրիշների կողմից:

Արեւելեան Ասիայի ապագայի համար ռուսական գրաւումները շատ աւելի վտանգաւոր են, քան կոչօնական յափշտակութիւնները միայն երկիրների կողմից: Մինչդեռ Գերմանիան և Անգլիան դեռ պէտք է ուղարկեն իրանց նաւերն այն հեռաւոր ծովերը՝ պահպանելու ու պաշտպանելու համար իրանց երկիրները Խաղաղ Ովկիանոսում, Ռուսաստանն անմիջական կերպով միացնում է իր ասիա-արեւելեան հողերն իրա ահագին կայսրութեան հետ, իսկ սիբիրական երկաթուղին ծառայում է

նրան իբրև մի հզօր գործիք աւելի և աւելի ամրապնդելու այնտեղ իր քաղաքական ու պատերազմական ոյժերը: Այդպիսով, այն հողերն արդէն պարզապէս կոչօնական չեն՝ թեթեւ կերպով կապած պետութեան կենտրոնների հետ, այլ Ռուսաստանը ստեղծել է իրա համար ռազմական մի կէտ, որտեղից նա արդէն կարող է առանց կանգ առնելու և աւելի ու աւելի մեծ ծաւալով տարածել իր աշխարհակալական, Չինաստանի վերաբերութեամբ, քաղաքականութիւնը: Այստեղ նա ունի հէնց նոյն ընթացքը, ինչ որ Միջին Ասիայում. — նա անցնում է երկաթուղիներ, ուղարկում է զօրքեր, հաստատում է զինւորական կայաններ, և ապա՝ դարձեալ երկաթուղիներ, զօրքեր, բերդեր և այլն: Սակայն, Միջին Ասիայի վրայով էլ Ռուսաստանն աւելի և աւելի մօտենում է Չինաստանին: Բացի Եապոնիայից, Ռուսաստանը միակ երկիրն է, որ Արեւելեան Ասիայում մղում է լիովին տրամաբանական քաղաքականութիւն: Եւ հէնց այդ պատճառով էլ ոչ մի տեղ գոյութիւն չունեն այնպիսի հակընդդէմ ինտերէսներ, որպէս Ռուսաստանի և Եապոնիայի միջև:

Ռուսաստանի կողմից սպառնացող վտանգը, շնորհով նրա գրաւումների, շատ ահեղ է: Անգլիան յայտնեց իր բողբոջ: Դրութիւնը կրիտիկական էր: Բայց Անգլիան այնքան էլ չէ սիրում երևան գալ մեծ ոյժի դէմ՝ առանց ունենալու դաշնակից: Եապոնիան, իբրև դաշնակից, դեռ շատ ակար էր. Գերմանիան աւելի շուտ թշնամի էր, բայց բարեկամ: Բացի դրանից Մեծն Բրիտանիան շատ գանդաղութեամբ է վճռում այդպիսի մի քայլ: Միև կողմից էլ Անգլիան այն ժամանակն արդէն խիստ զբաղւած էր Հարաւային Աֆրիկայում: Հաղիւ թէ մեծ սխալ արած լինիք, եթէ ասենք, որ հարաւ-աֆրիկեան ձգնաժամը մասամբ առաջ բերւեցաւ Անգլիայի կողմից՝ շնորհով սրա ցանկութեան — արձակել իր ձեռքերն Ասիայում: Հարաւ-աֆրիկեան պատերազմի միջոցին ամենքը սպասում էին, որ Ռուսաստանը պատերազմ կը յայտարարէ Անգլիային. քաջարի Բուրերի համար, աւետարանից յետոյ, ռուսաց ցար էր համարւում առաջին նեցուկ: Բայց նրանց համար, որոնք գիտեն գործերի վիճակը Ռուսաստանում, պարզ էր, որ նրա տնտեսական թշուառ դրութեան, նրա վարչական յետամնաց ու անպէտք մեխանիզմի, նրա քրօնիկական աղքատութեան ներկայութեամբ — ցարի կառավարութիւնը չէր համարձակւել իսկ մտածել որ և է յարձակողական պատերազմի մասին Անգլիայի դէմ:

Բայց ինչպէս բացատրել այն, որ ռուսական դիպլոմատիան — չը նայելով այն բանին, որ նա պէտք է իմանայ իր պետութեան թուլութիւնը — այդպիսի յանգուգն ընթացք է բռնում: Նա հարկադրւած է այդպէս վարւել: Ցարի կառավարութեան անմիտ արշաւն ունենալու աջողութիւններ արտաքին գործերում անհրաժեշտ է, որպէս զի ծածկէ կայսրութեան ներ-

քին տկարութիւնը: Հէնց որ Ռուսաստանն իրան ցոյց տւեց տկար արտաքին քաղաքականութեան մէջ — և նա կը կորցնէ իր ամբողջ վարկը արտասահմանում, նա կը կորցնէ իր կրեդիտը: Ցարիզմը վաղուց արդէն դարձել է եւրօպական բուրսաների կիլեմտը: Ռուսական արտադրութիւնը ներկայումս ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ բուրսային շահագիտական խաղ, սպեկուլացիա. — քանի որ այդ խաղով կարելի է բարձրացնել գինը, ցարի գահը գեռ կանգուն է. բայց եթէ բուրսան գրտաւ, որ իրա համար աւելի ձեռնտու է գինն իջեցնելու խաղը — ցարի գահը կը գառնայ հազար ու մի կտոր: Երկար տարիների ընթացքում գործադրւած անընդհատ փոխառութիւնների սխտէմը վերին աստիճանի սրամտացրել է ռուսական ֆինանսների միխտարներին և դարձրել նրանց խիստ ճարպիկ դրամ գրտնելու մէջ: Իմանալ վարել բուրսայի հետ — դա ամենաբարձր ֆինանսական գիտութիւնն է դարձել ռուս պետական իմաստունների աչքին: Եւ էլ ինչ տեսակ ասես միջոցների չեն գիտում Ռուսաստանում, որ կարողանան օտար կապիտալները գրաւել պետական գանձարանները: Երկաթուղային քաղաքականութիւնն աւելի և աւելի դառնում է միջոց փոխառութիւններ ձեռք բերելու, որոնց մշտական ու մեծ «մնացորդները», — մնացորդներ, որ շատ անգամ գոյացում են ի հաշիւ նոյն իսկ երկաթուղային գծի շինութեան — մտնում են պետական գանձարանը: Ֆրանսիայի հետ ունեցած բարեկամութիւնը սկզբից մինչև վերջ գործադրւում էր միայն այն բանի վրայ, որ դատարկւեն ֆրանսիական կապիտալիստների գրպանները — և դա անցեալ դարու ամենամեծ բուրսային աւազակութիւնն էր: Հէնց այդ կերպով էլ Ռուսաստանի իւրաքանչիւր աջողութեանն արտաքին քաղաքականութեան մէջ յաջորդում է նոր փոխառութիւն: Բայց որքան նշանաւոր իննն այդ աջողութիւնները, այնքան աւելի, միւս կողմից, կարիք է զգացում դրամի և պահանջ փոխառութեան: Մասնաւորաբար, Ռուսաստանի անցնելը դէպի խաղաղ Ովկէանոսը նրան գրել է դէմ յանդիման նորանոր ծախսերի ծովային զինաւորութեան համար — ծախսեր, որոնք այդպիսի ահագին ծաւալով երբեք առաջ յայտնի էլ չեն եղել: Մինչև հիմա ռուսական նաւատորմն ունէր միայն ափերի ինքնապաշտպանութեան դերը: Այժմ Ռուսաստանը հարկադրւած է խողով Ովկէանոսում ունենալ զրահաւորներ և մըրցել ծովային զօրութեան մէջ Անգլիայի և Եապօնիայի հետ: Ո՛չ մի երկիր չէ կարող պահանջել նաւատորմ բացառապէս հարկերի հաշին: Որպէս նաւատորմի, նոյնպէս երկաթուղիների ծախսերը ծածկւում են փոխառութիւնների միջոցով: Բայց մինչդեռ երկաթուղիների շինութիւնը գնալով աժանանում է, նաւատորմի շինութիւնը աւելի և աւելի թանկանում է, և այս վերջին ծախսերի, հակառակ երկաթուղային ծախսերին, այլ ևս սահման չկայ. նրանց պահանջն անվախճան է: Նաւատորմի շինութիւնն արդէն ըստ

ինքեան կ'սրող է սնանկութեան հասցնել ինչ երկիր որ կուզես: Ինչ ասել, ուրեմն, այդ պարագային Ռուսաստանի մասին, որն ապրում է միայն փոխառութիւններով: Մինչդեռ Անգլիայի ու Գերմանիայի նաւատորմային ծախսերը վարձատրւում են մինչև մի յայտնի աստիճան նրանց առևտրական գործառնութիւններով, — Ռուսաստանն այդ տեսակէտից միայն ծախսեր է անում և ոչ մի հասոյթ չունի իր կօլօնիական առևտրից: Եւ այսպէս, փոխառութիւններ, միշտ փոխառութիւններ! Առանց զրանց ցարիզմն իր նաւատորմը և իր զօրքը կը տեսնէ շատ ցածր միւս տէրութիւնների զինւորական ոյժերից, և Ռուսաստանը նոյնքան ապիկար կը լինի կռիւ մղելու որ և է ժամանակակից զինւորական պետութեան դէմ, որքան Թիւրքիան կամ Չինաստանը: Հասկանալի է հիմա, թէ ինչու ցարն այնպիսի աղերսական կերպով երգ էր երգում խաղաղութեան անհրաժեշտութեան մասին: Ուրովհետև դրամ չունի ծածկելու համար զօրքի և նաւատորմի շարունակ աճող ծախսերը, նա էլ բարեացակամ կերպով առաջարկում էր միւս տէրութիւններին կանգնեցնել իրանց սպառազինութիւնը: Այդ պատճառով ցարն իր արտաքին քաղաքականութեան մէջ չէ կարող յետ գնալ: Նա պէտք է գնայ առաջ և կամ միանգամից ամեն բան նրա երկրում կը խորտակէ:

Այլ երջապէս, դարձեալ մի պարագայ — արտադրատիպի քաղաքականութիւնը, նոյն իսկ իր բնութեամբ, բացառիկ է: Նա ո՛չ մի նկատողութեան չէ առնում ուրիշի շահերը, պատմական զարգացումը և գիտէ միայն մէկ ոյժ — բռնեցքը: Ճիշդ նոյնպէս, ինչպէս իր սեփական երկրում ռուսական արտադրութիւնը անգիտանում է նրա առաջնադաս զարգացման աղաղակիչ փաստերը, բռնի կերպով լեցնում ու փակում է ամեն մի ճեղք և այդպիսով ժողովրդին մղում դէպի յեղափոխութեան ուղին, հէնց այդպէս էլ փակելով Եապօնիայի առաջ սրա արտաքին յարաբերութիւնների զարգացման ամեն ճանապարհները, մղում է նրան դէպի պատերազմ...

Ինչ վերաբերում է Եապօնիայի շահերին, որ նրան բերել են մինչև պատերազմ, դրանք առաջ են եկած հէնց նրա դրութիւնից՝ իբրև կապիտալիստական տէրութիւն Արևելեան Ասիայում: Այսած այն ժամանակից, ինչ Եապօնիան դարձել է ժամանակակից ինդուստրիական երկիր, նրա սահմաններում առաջացել է ազգաբնակչութեան չափազանց խտութիւն ու գերարտադրութիւն: Կապիտալիստական յեղափոխութիւնը, որ կատարեց նոյն ինքը, այժմ նրան ստիպում է յեղափոխել իր շուրջ գտնւած երկիրները: Ինչպէս Անգլիան կապիտալիստական դարձրեց արդիւնաբերութիւնը եւրօպական կօնտինենտի երկիրներում, նոյնպէս Եապօնիան ունի միսիա վարձատրել Արևելեան Ասիան կապիտալիստական կուլտուրայի պարզեցնելով, որպիսին են. — գործարաններ, բանկեր, զինւորական նաւատորմ,

անգլիական հիւանդութիւն և ժողովրդային մասսաների պրոլետարիատ դարձնելու: Եթէ նրան չաջողէ այդ, այն ժամանակ կը խորտակէ նրա սեփական կապիտալիստական բարեկեցութիւնը, իսկ նորից վերագտնալ իրա նախակապիտալական ժամանակների կարգերին նա այլ ևս անկարող կը լինի: Չինական հարցըն, այդպիսով, Եապոնիայի համար դարձել է իրա սեփական գոյութեան հարց:

Եապոնիայի և Ռուսաստանի պատերազմը բոլորովին կարեց կապիտալիստական պետութիւնների քաղաքական յարաբերութիւնների միջև եղած թոյլ կապը: Կապիտալիստական աշխարհի քաղաքական հաւասարակշռութիւնը խախտած է, և հաղիւ թէ կարելի կը լինի այն նորից հաստատել առանց յետագայ պատերազմների: Ամենից շատ շօշափւած են Անգլիայի շահերը: Ռուսաստանի յաղթանակը Եապոնիայի վրայ՝ կատարելապէս ցարի կառավարութեան տրամագրութեան տակ կը դնէր Չինաստանին: Անգլիայի ազդեցութիւնն Արևելեան Ասիայում բոլորովին կանգաւալուծէր: Հասկանալի է նոյնպէս, որ Ռուսաստանը, ամրացնելով իր դիրքը Պէկինում, արդէն ոչ մի էլ պատճառ չէր ունենալ հրաժարուելու իր յարձակողական քաղաքականութիւնից՝ Կենտրոնական Ասիայում: Մի միջադէպ Անգլիայի հետ, հետեւաբար, կը յետաձգէր մինչև մի նւաղ բարեպատեհ րօպէ, բանի որ Ռուսաստանի զօրութիւնն աճելու վրայ կը լինէր: Եւ ահա ինչու Անգլիան արդէն այժմից սկսել է յարձակողական քաղաքականութիւն, մղելով պատերազմական եռանդներ Տիբէտ և գրգռելով Եապոնիային դէպի պատերազմ: Միևնոյն ժամանակն էլ Գերմանիան, որ հաստատուել է Վիա-Չուու, այլուում է անհամբերութեամբ՝ ընդլայնելու իր ասիական հողերը: Կօլոնիական նախագծեր Հեռաւոր Արևելքում գծագրուում են նոյնպէս Միացեալ Նահանգների կողմից: Յիշատակենք նաև Աւստրիա, Իտալիա, Բէլգիա, որոնց պատերազմական զրահաւորներն արդէն վխտում են, պատրաստուելով պոկել իրենց համար էլ մի կտոր ընդհանուր բաժանման միջոցին: Ֆրանսիայի կօլոնիական քաղաքականութիւնը մինչև հիմա եղած է շատ անբախտ.— ֆրանսացիներն իրանց կօլոնիաների համար ծախսել են միլիարդներ՝ առանց որ և է ակներև օգտի երկրի արդիւնաբերութեան համար: Ընդհանուր կուրը կօլոնիաների համար Չինաստանում՝ Ֆրանսիա կան բուրժուազիային էլ նոյնպէս տւեց յոյս կարգի բերել իր կօլոնիական գործերն ի հաշիւ Բազդիսանի: Այդպեղ դեր են խաղում նաև հին միջագետքի Անգլիայի հետ Եգիպտոսի առիթով, վերջապէս և Ռուսաստանի հետ ունեցած կապը, ապա և այն փոփոխութիւնը, որ այդ պատճառաւ կատարւեց վրիժառութեան գաղափարի մէջ (Էլզաս-Լոտարինգիայի համար): Դա սակայն, հետաքրքրաշարժ խնդիր է, որի մասին կը խօսենք մէկ այլ առիթով: Միևնոյն ժամանակ Ռուսաստանի կապած մնալը Արևելեան պա-

տերազմում առաւել կարելի է դարձնում Բալկանեան թերակղզիի ազգային միջագետքերի լուծումը և Աւստրիան լուրջ կերպով պատրաստուում է միջամտել: Այսպէս, մէկը հետեւում է միւսին, և ամբողջ զէնքը ճարճատուում ու տապալում է:

Պատերազմը սկսեց Մանջուրիայի և Կորէայի համար, և այժմ նա արդէն փոխւել ու դարձել է վէճ հեգեմոնութեան համար Արևելեան Ասիայում, նա կը մեծանայ և կը դառնայ հարց ցարի Ռուսաստանի զօրութեան մասին աշխարհում և աւարտ կը ստանայ ամբողջ աշխարհի քաղաքական հաւասարակշռութեան տեղափոխութեամբ:

Պրա առաջին հետեւանքը կը լինի՝ անկում առսական միապետութեան...

ՊԱՐԻՍԻՍ

Թարգ. «ՆՄԿՐԱ» շաբաթաթերթից,
«Կենտրոնական օրգան Ռուսաստանի
Սօցիալ-Դեմոկրատական Բանուորական
Կուսակցութեան»:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆԱԽԱՀԱՆԳԻՍՏ Մ-դի գանձարանում մինչև 1903 Յուլիար 1-ը ստացւել են.—

Սուրենի և Աստառի նւիրատուութիւն 110 ր, Տեղւոյս խմբերու նւերներից 54 ր 50 Կ, Վրիժառու խ. տարեկան անդովճ. 74 ր. 70 Կ, Կայծակ խ. տար. անդովճ. 75 ր 7 Կ, Երիտասարդաց խ. տար. վճ. 29 ր 70 Կ, Հարաֆեան խ. 57 ր 96 Կ, Խորհէն խ. 15 ր, Երիտասարդաց նւեր 10 ր 30 Կ, Շղթայ խ. ապառիկ մնացած անդամովճարներից 27 ր 80 Կ.

Վրիժառու խ. անդովճ. 85 ր 90 Կ, Կայծակ խ. 90 ր 50 Կ, Հարաֆեան 49 ր 60 Կ, Կրակ խ. 52 ր 70 Կ, Երիտասարդ խ. 32 ր 90 Կ, Խորհէն խ. 29 ր 50 Կ, Շղթայ խ. 24 ր 30 Կ, Լուիւծ խ. 7 ր 40 Կ, խմբերից գոյացած նւիրատուութիւն 64 ր.

Խմբերի ամաւճարներ Մայիս—Հոկտ.—Կայծակ խ. 69 ր, Վրիժառու խ. 51 ր 10 Կ, Երիտասարդ խ 36 ր 70 Կ, Հարաֆեան խ. 33 ր, Կրակ խ. 33 ր, Արաքս խ. 32 ր, Առիւծ խ. 9 ր 29 Կ.

Անգամավճարներ.— Արաքս խ. 14 ր, Կրակ խ. 5 ր 30 Կ, Հարաֆեան խ. 5 ր 40 Կ, Երիտասարդաց խ. 6 ր 70 Կ, Վրիժառու խ. 10 ր, Կայծակ խ. 12 ր. 80 Կ, Տարօնի նւիրատուութիւն 16 ր, Կայծակի նւ. Լիրու. 7 ր 90 Կ, Տարօն խ. 4 ր, Կրակ խ. 5 ր 40 Կ, Առիւծ խ. 2 ր 80 Կ, Երիտասարդ խ. 7 ր 10 Կ, Հարաֆեան խ. 6 ր 90 Կ, Վրիժառու խ. 5 ր 60 Կ, Տարօնի նւիրատուութիւն 2 ր, Հարաֆեանի նւիրատու. 2 ր 20 Կ, Արաքս խ. 14 ր, Մատինեան 10 ր 20 Կ, Մատինեան խ. նւիրատու. 7 ր 6 Կ.

Կայծակ խ. Նոյ—Գեկտ. ամսվճ. 39 ր 20 Կ, Արաքս խ. 21 ր 60 Կ, Երիտասարդ խ. 10 ր 60 Կ, Մատինեան խ. 13 ր 65 Կ, Հարաֆեան խ. 7 ր 70 Կ, Կրակ խ. 6 ր, Տարօն խ. 4 ր 80 Կ, Վրիժառու խ. 3 ր 60 Կ, Առիւծ խ. 90 Կ.

Կերտառութիւններ—Երիտասարդաց խ. 35 ր 60 Կ
Կայծակ խ. 30 ր, Տարօն խ. 20 ր, Կրակ խ. 21 ր,
Արաքս խ. 19 ր, Հարաֆեան խ. 12 ր 60 Կ, Վը-
րիժառու խ. 5 ր 70 Կ, Առիւծ խ. 4 ր 70 Կ, Մա-
տինեան խ. 3 ր 70 Կ, Աշխենեան նոր համադրեալ
անդժճ. 30 ր, 1900 թ. տոմսակների փողից Գե-
տաբերանից 20 ր, զինւորական տուգանք 5 ր,
Անդամավճարներ.—Երիտասարդ խ. 9 ր 20 Կ, Մա-
տինեան խ. 7 ր. 50 Կ, Աշխենեան խ. 63 ր, Տա-
րօն խ. 4 ր 80 Կ, Կրակ խ. 5 ր 80 Կ, Առիւծ խ.
4 ր 40 Կ, Արաքս խ. 18 ր 20 Կ, Աշխենեան խ. 6 ր.

Վրիժառու խ. Յունվ. ամսվճ. 8 ր փետր. ամ-
սավճարներ—Տարօն խ. 5 ր, 60 Կ, Երիտասարդ 9 ր
Աշխենեան խ. 4 ր, Կրակ խ. 4 ր 20 Կ, Առիւծ խ. 5 ր
20 Կ, Հարաֆեա խ. 5 ր 20 Կ, Աշխեն խ. Ներսիս-
տառութիւն 35 ր, Աշխենեան խ. Ներս. 1 ր, Մատին-
եան խ. 3 ր 10 ր. Գմր. 1815 ր. 83 Կ.

ԲՈՒՐԳԱՋԻ Մ-ՂԻ ԳԱՆՃԱՐԱՆՈՒԹ ԽԱՍԱԳԵԼ ԵՆ.—

Հանգանակած Այտոսում.— Առաքել Զուկասեան, Սարգիս
Յակոբեան, Կարապետ Ստեփանեան, Մկր. Տէր Յակոբեան, Ա-
ւետիս Գարաբան 10-ին ֆ, Նազարէթ Առաքելեան 8 ֆ, Թով-
Աւագեան, Դաւիթ Գալուստեան, Սեդ. հաճի Օհաննէսեան 6-ին
ֆ, Յակոբ Պաղտասարեան, Վարդան Թադէոսեան, Նշան Դաւիթ-
եան, Օհ. Պաղտասարեան, Դմէ 5-ին ֆ, Հայրապետ Հայրապետեան
4 ֆ, Գէորգ Մարգարեան 3 ֆ, Թոսոր Սթանշէլի, Պ. Ի. Կրանչա-
րօֆ 2-ին ֆ, Միսաք Մարտիրոսեան, Գր. Շահապեան, Տիմիթ-
րի Միխայելօֆ, Գէորգ Ազոեան, Մարտիկ Կրամեան 1-ին ֆ-
Գումար 117 ֆ.

Հանգանակած Գարաբունարում, Սթրալճայում եւ Ռատնա
Մահալում.— Նո. Մինասեան, Ստ. Միքայէլեան, Իսր. Տէրտէր-
եան, Երանոս Մուրատեան, Կարապետ Հովնան, Դաւիթ Յա-
կոբեան 5-ին ֆ, Մարգար Յուշուրեան 4 ֆ, Նո. Զուկասեան, Զ-
Մելքոնեան, Բէք Օհաննէսեան, Սերոբ Ներսէսեան 2-ին ֆ, Ռատ-
նա Մահալէի գանձին միջի դրամը 12 ֆ. Գմր. 54 ֆ.

Հանգ. Բուրգազի շրջակայ կայարաններում (Պր. Մուրատի
ծեղոցով).— Տ. Իվ. Շիվալիով 20 ֆ, Եր. Մուրատեան 6 ֆ, Դա-
ւիթ Մկրտիչեան, Դաւիթ Յակոբեան, Գր. Մելքոնեան, Մու-
շեղ Գրիգորեան 5 ֆ, Գէորգ Օհաննէսեան, Տոնիկ Մարտիրոս-
եան 3-ին ֆ, Անտոն Յարութիւնեան, Վարդան Բիւսոսեան, Աւե-
տիս Յակոբեան, Մարգար Միխայելեան, Պետ. Փայրեան 2-ին
ֆ, Տրակո Կուլէկ, Ասատուր Դազարեան, Տիգր. Մարտիրոսեան
1-ին ֆ, Զարաբունարի ընկերներից 8 ֆ, Զերմինիում հանգ.
15 ֆ, Ստրալճայում հանգ. 30 ֆ. Գմր. 118 ֆ. Ընդհ. գմր. 289 ֆ.

ՄՈՒՐԱԳԻ Մ-ՂԻ ԳԱՆՃԱՐԱՆՈՒԹ ԽԱՍԱԳԵԼ ԵՆ.—

Արշեստաւորից Մայիս եւ Յունիս ամս. 10 ր, Հանգ. խնջոյ-
քում 50 ր, Պ. Յովնաննէսեան Նւէր 100 ր, Պ. Մ. Մ. 200 ր, ՏԱ-
ՐՕՆ խ. (Յուն. ամս.) 10 ր. 40 Կ, Տարօն խ. նոր ընկերներից
2 ր. 50 Կ, Ժիւլիան խ. (Յունիս ամս.) 3 ր 70 Կ, ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՆ
Խ. (Յունիս ամս.) 7 ր, Ռօբինզոն Նւէր 50 Կ, ՏԱՐՕՆ Խ
(Օգ. ամս.) 11 ր 30 Կ, ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՆ Խ, Յուն. եւ Օգ. ամս-
14 ր, Արշեստաւոր 10 ր, Արշեստաւորի միջոցով հանգ. 23 ր. 40 Կ
ՌԵՏՈՒՆԵԱՆ Խ, Սեպտ. ամս. 6 ր, Պապինի միջոցով հանգ. 41 ր
20 Կ, Բայեազէդի Կրօնաւոր 10 ր, ՏԱՐՕՆ Խ. Սեպտ. եւ Հոկտ-
ամս. 19 ր, Արշեստաւոր (Նւէր Սեպտ. ամս.) 5 ր, Նոյնի հանգ.
5 ր, Նոյն (Հոկտ—Նոյ. ամս.) 10 ր, Նոյն (Դեկտ. ամս.) 5 ր,
Նոյնի հանգ. 5 ր, Արծի եւ Վարժապետի միջոցով հանգ. 140 ր,
Թիթիսարի միջոցով հանգ. 18 ր 65 Կ, Նոյնի միջոցով հանգ. մի
պարոնից—Վարազդատ 3 ր, Աւետիսից մնացած 138 ր, Արշես-
տաւորից Նւէր 5 ր, Նոյնի հանգ. 5 ր, ՌԵՏՈՒՆԵԱՆ Խ. (Հոկտ
Նոյ. եւ Դեկտ. ամս.) 11 ր. 50 Կ, ՏԱՐՕՆ Խ. (Աւետիսի արդիւնք
18 ր, Վարչական երեկոյից 201 ր. 64 Կ. Գմր. 1089 ր. 79 Կ.

ԱՐԱՐԱՏԵԱՆ Մ-ՂԻ ԳԱՆՃԱՐԱՆՈՒԹ ԽԱՍԱԳԵԼ ԵՆ.—

Տօնական վաճառքի արդիւնքի մնացած ապառիկ 3 ր, 8 ան-
դամներից Մայիսի վճար 4 ր 10 Կ, Մարազած խ 6 անդ. Փետր-
վճ. 3 ր, Մարտի վճ. 3 ր, 5 անդ. Ապր. եւ Մայիս վճ. 5 ր,
Կ—Զ. գիւղի Լոյս, Աստղ եւ Գնդակ խ. 14 անդ. ժողոված 3 ր
10 Կ, ԱՐԱՐԱՏԵԱՆ Խ. 11 անդ. Մարտ վճ. 5 ր 50 Կ, Մունշի, Հա-

յելի եւ Լեւոնի սարքած ընկերական քէֆերից 74 ր 32 Կ. եւ
6 ր 57 Կ, Նոյն քէֆում ժողոված Նւէրներ 3 ր, Փ. գիւղի Փայ-
լակ, Կայծակ, Պարտէզ եւ Բողբոջ խ. ներկայացումից 4 ր 27 Կ
Յոյս խ. 8 անդ. Յունիս վճ. 4 ր 50 Կ, Մուրճանդակ խ. 10 անդ
Յունիս վճ. 6 ր 90 Կ, ԴՄԱՆ... գիւղի Լուսաբեր խ. 8 անդ.
Ապր. Մայիս, Յունիս վճ. 4 ր 50 Կ, ԶԱՄ... գիւղի Զիթենի խ
4 ր, Ին... գիւղի Երասխ խ. 1 ր 70 Կ. Գմր. 136 ր. 66 Կ.

ԲԱՆԻՈՐ Մ-ՂԻ ԳԱՆՃԱՐԱՆՈՒԹ 1903 Յունար 1—Ապրիլի վերջը ստացել են.—

„Ազատիչ“ խ. Յունվ. ամս. 8 ր 50 Կ, „Յիշատակ“ խ. հոկ-
ամս. 1902, 7 ր 80 Կ, Աւետիսի խ. 14 ժողով. 32 ր, „Անտոր“ խ
Նոյ ամս. 1902 4 ր 40 Կ, Նոր տարւայ առիւծի հանգ. մի խումբ
պատանիներից 15 ր, „Օղակ“ խ. երեկոյից 228 ր 95 Կ, „Օղակ
խ. երեկ. մնացած իրերի վաճառումից 7 ր 50 Կ, Նո. 86 հանգ.
Թերթից 10 ր. Նո. 66, 5 ր, Նո. 65, 10 ր 50 Կ, Նո. 72, 5 ր, Իս
—Փու. երեկոյից 80 ր, Իս—Փու. երեկոյից. ապառիկներ 6 ր. Ա-
ւետիսի խ. 11-ից 25 ր 55 Կ. եւ Նո. 8-ից 12 ր 20 Կ, „Պայ-
թուցիկ“ խ. 1902 հոկտ—Նոյ—Դեկտ. ամս. 13 ր, „Յիշատակ“
խ. Նոյ. ամս. 7 ր 80 Կ, „Ազատակ“ խ. Նոյ. Դեկտ. ամս. 11
ր, եւ մի ընկերական երեկոյից. 34 ր 17 Կ, „Վրէժ“ խ. 1902
Յունիս ամս. 7 ր, „Աստղ—Արուսեակ“ խ. 1902 Յուն. ամս. 4 ր,
„Աշխատանք“ խ. 1902 Հոկտ. 21 ր, Աւետիսի խ. 15-ից 22 ր
50 Կ, վեր. Վրէժ խ. Փետր. ամս. 11 ր, Տեղական մի գործչի
32 ր. պարտքից 20 ր, Որոտումի, Գնթունու, Համրի, Կոռնկի
եւլի. երեկ 252 ր 70 Կ, Երասխածորի Նո 5-ից Կնտոն փոխ-
22 ր, „Յոսանդ“ խ. 1902 թ. ամս. 6 ր 30 Կ, Զրին, Հեղեղ, Կար-
կուտ եւ Փայլատակի միջ. հանգ. 30 ր, „Օղակ“ խ. 1902 հոկ-
տոյ. եւ Դեկտ ամս. 20 ր, „Յիշատակ“ խ. 1902 Դեկտ. ամս-
10 ր 25 Կ, „Յոսանդ“ խ. Յունվ. Փետր. ամս. 10 ր 15 Կ, „Վրէժ
խ. Փետր. ամս. 7 ր 50 Կ, Նւէր Սիսակից 10 ր, „Կայծակ“ խ
ամս. 9 ր 70 Կ, „Մասուն“ խ. 1902 Հոկտ. Նոյ. եւ Դեկտ. ամս
17 ր, „Աշխատանք“ խ. երեկ. 171 ր 39 Կ, Որոտումի, Գնթունու
եւ Համրի երեկոյից իրերից 5 ր 40 Կ, Աշխոյժ Մ—ից Կնտո-
նիսաղրեկ 55 ր. Գմր. 1471 ր. 52 Կ.

ՄԱՐԱՂԱՅԻ Մ-ՂԻ ԳԱՆՃԱՐԱՆՈՒԹ ԽԱՍԱԳԵԼ ԵՆ.—

Կ. Բ. 200 թուման, Յ. Ի. 50 թ, Ա. Վ. 35 թ, Մ. Շ. 10 թ,
Յ. Մ. Բ. 8 թ, Գ. Բ. 3 թ, Հասան—Շահ (Ի. Մ. Զ.) 23
թ, Ուն 15 թ, Յ. Զ. 10 թ, Պ. Ս. 12 թ, Սուլէյման 3 թ, Յ-
Էւ 15 թ, Գ. Ս. 2 թ, Մ. Շահ—Բուղազ 4 թ, Թատերասեր-
ներից 3 թ. Գմր. 393 թուման

ՈՒՌԱՅԻՆԻ Մ-ՂԻ ԳԱՆՃԱՐԱՆՈՒԹ 1903 Օգոստ. —Նոյ. 30-ը ստացել են.—

Անհաշտ խ. 134 ֆ 50 ս, Մուրատ խ. 22 ֆ, Երեմովայից
30 ֆ. Գմր. 186 ֆ. 50 ս.

ԿՐՈՍԱԿԵՐԹԵԱՆ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳԱՆՃԱՐԱՆՈՒԹ ՍՏԱՅԵԼ ԵՆ ՀՆԱԿԱԿ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ.—

ՄՈՒՐԱՏ	Մ—ղից	-	-	-	-	600 ր.
"	Մ—ղի միջոցով ՆԱԽԱՀԱՆԳԻՍՏ Մ—ղից	-	-	-	-	600 ր.
"	"	"	ԱՐԱՐԱՏ	"	-	400 ր.
"	"	"	ԱՐԱՐԱՏԵԱՆ	"	-	300 ր.
"	"	"	ԵՐԵՄՅԱՆ	"	-	100 ր.
ԶԱՐԱՀԱՆԴ	Մ—ղից	-	-	-	-	500 ր.
ՆՈՐ—ԺԱԳՈՐԴ	"	-	-	-	-	100 ր.
ՓԻԹՄՊՈՒՐԳԻՅԱՆ	Անդամիկ	-	-	-	-	10 շիւ.

Ա Ձ Դ

Մանաւոր Հասցէներով „Հնչակ“ ստացողնե-
րից խնդրում է շտապել նորոգել իրանց Հասցէ-
ները, Հակառակ պարագային այլ ևս չի ուղարկե-
լու Թերթը: